ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2013Թ_Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի գյուղապետարանի աշխատակազմը բնակչության բարեկեցության բարելավման և համայնքային խնդիրները լուծելու նպատակով կատարել է հետևյալ աշխատանքները.

Ստացվել է 78 գրություններ, պատասխանվել է 67 գրությունների, ընդունվել է համայնքի ղեկավարի 17 որոշումներ, արձակվել 8 կարգադրություններ. Համայնքի ավագանին գումարել է 3 հերթական նիստ, ընդունել 17որոշումներ: Գրանցվել է 358 քաղաքացիների ընդունելություններ.

1.Գյուղատնտեսություն

2013թվականին Մյասնիկյան համայնքում սկսվեց գյուղատնտեսության և վերամշակման ոլորտների զարգացմանն ուղղված համատեղ ծրագրի իրականացումը ,որի արդյունքում ՄԱԶԾ-ի ներկայացուցիչը և արգենտինահայ հայտնի գործարար Էդուարդո Էռնեկյանը պայմանագիր ստորագրեցին Մյասնիկյան համայնքում սկսել գյուղտեխնիկայի պարկի ստեղծման ծրագրի իրականացումը:
Համայնքի միջոցներով կառուցվեց գյուղատնտեսական մեքենաների հավաքակայանի համար ծածկոց և համալրվեց 3 հատ անվավոր տրակտորով, 3 հատ այգու գութանով, 3 հատ սրսկիչներով: Ծրագրի իրականացման դեպքում կավելանա մշակովի տարածքները,որը կբերի գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում 15-20 %-ով:
Գյուղտեխնիկայի պարկի արդյունավետ օգտագործման, տիրապետման և տնօրինման համար հիմնադրվեց իրավաբանական կառույց՝ Մյասնիկյանի Զարգացման Հիմնադրամ (ՄԶՀ):
Գյուղապետարանը աջակցել է համայնքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, համայնքի անապահով ընտանիքներին հատկացնելով դրամական օգնություն՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար:
Պետական միջոցառումների շնորհիվ համայնքը ձեռք է բերել և գյուղացիական տնտեսություններին է բաշխել 58տոննա 350կգ ազոտական պարարտանյութ և 17տոննա դիզելային վառելիք
2013 թվականին համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերից կատարվել է 251,0 հա հողատարածքի ցանք:
Համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվել մոտ 1500 տոննա ծիրանի բերք,որի իրացման համար գյուղացիները դժվարությունների

առաջ են կանգնել:
Հողաշինության բնագավառում աշխատանքներ են տարվել համայնքի հողային հաշվեկշռի, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ.
2013թվականին աճուրդային եղանակով օտարվել է 21,0 հա համայնքային սեփականության այլ հողեր.
համայնքում հողասեփականատերերի հետ իրականացվում է բացատրական պարզաբանումներ՝ հողի և գույքահարկի գծով հարկային պարտավորությունների կանոնավոր կատարման համար:
համայնքում տարվել է առկա անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներ և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ.
Աշխատակազմի կողմից ուսումնասիրվել, պարզաբանվել և օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել գյուղատնտեսության վերաբերյալ շուրջ 12 դիմումներ.

2.Կրթություն , մշակույթ ,երիտասարդություն

2013 թվականի հուլիսի 1-ին Մյասնիկյանի գյուղապետարանը տեղափոխվեց վերակառուցված և նոր գույքով համալրված վարչական շենք.
գյուղապետարանը կազմակերպել է համայնքի ենթակայության կազմակեպությունների՝ մանկապարտեզի, կուլտուրայի տան, գրադարանի , երաժշտական դպրոցի գործունեությունը.
մայիսի 1-ից վերաբացվել է համայնքի մանկապարտեզը , որտեղ գործում է չորս խումբ՝ 130 երեխաներով.
համայնքի միջոցներից 4245,0 հազար դրամ գումար հատկացվել է մանկապարտեզի սնունդի ձեռք բերման և աշխատավարձի վճարման համար.
գյուղապետարանը աջակցել է դպրոցի գործունեության և գեղարվեստական գործունեության (պարի խմբի)զարգացմանը.
մշակույթի բնագավառում կազմակերպվել և անցկացվել է տարբեր միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի օրվան , Սարդարապատի հերոսամարտին և Հայոց պետականության վերականգման օրվան նվիրված.
մանկապարտեզում կազմակերպվել է երեխաների միջազգային օրվան նվիրված միջոցառում և տիկնիկային թատրոնի ցուցադրում.
համայնքի սպորտի և երիտասարդության բնագավառում եղել է նս առաջընթաց.
համայնքը պարբերաբար մասնակցել է մարզաձևերի տարբեր առաջնությունների և արժանացել մրցանակներ.
հունիսի 25-ից Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի գործունեության առթիվ Արագածավան համյանքում սկսվեց սպորտային մրցութային խաղեր,որը շարունակական բնույթ է կրում.
համայնքը աջակցել է <<Հայրենականչ>>, <<Ազրոլրատու>> , <<Շրջադարձ>> <<Արտակարգ >> թերթերի հրապարակման և տարածման համար.
կանոնավոր իրականացվել է գարնան զորահավաքի կազմակերպման աշխատանքները, համապատասխան աշխատակցի կողմից վարվում է զինզպարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանները.

կազմվել և հաստատվել է Մյասնիկյան գյուղական համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում պաշտպանության նախապատրաստման 2013թ-ի միջոցառումների պլանը.

3.Կոմունալ տնտեսություն

համայնքում կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի միջոցներով կանոնավոր իրականացվում է աղբաթափման և սանիտարական մաքրման աշխատանքներ.
մինչև գարնան գյուղատնտեսական աշխատանքների սկսվելը կատարվել է դաշտային ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքներ.
համայնքում իրականացվել է կոյուղու կեղտաջրերի հեռացման և մաքրման աշխատանքներ.

4.Ֆինանսական և սոցիալական ծառայություն

կազմակերպվել և միջոցներ է ձեռնարկվել հիվանդների, սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման համար .
դրամական օգնություն է տրամադրվել բուժման կարիք ունեցող բնակիչների.
իրականացվել է աշխատակազմի հաշվապահական հաշվառման ,աշխատակազմի ֆինանսական, հարկային, սոցիալական ապահովության պարտադիր վճարների գծով գործառույթները.
Աշխատակազմը իր և ենթակա կազմակերպությունների աշխատավարձի գծով պարտք չունի.
Ընդհանուր բյուջեն կատարվել է 99,2 %-ով , սեփական եկամուտների գծով 93,5 %-ով:

Չնայած համայնքում կատարած շատ աշխատանքների, դեռևս կան առաջնահերթ համարվող հիմնահարցեր.
_Կուտուրայի տան վերանորոգում
_ եկեղեցու կառուցում
_ներհամայնքային ճանապարհների (6-7կմ) վատ վիճակ
_համայնքային կենտրոնի բացակայություն

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIK OF ARMENIA
ARMAVIR MARZ
MIASNIKYAN MUNICIPALITY

Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան
Փող. Մյասնիկյան
Հեռ. (0233) 74-6-73

Armavir marz Miasnikyan village
Str. Miasnikyan
Tel. (0233) 74-6-73

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

„11„ հուլիսի 2013թ գ.Մյասնիկյան

2013 թվականի հուլիսի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի պետ՝ Ա.Թովմասյանի, Մյասնիկյան համայնքի բնակիչների, գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու անդամների.

Նախագահությամբ՝ Ա.Պետրոսյանի

Քարտուղարությամբ՝ Ա.խաչատրյանի

Օրակարգում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի գյուղապետարանի 2013թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվության քննարկման և հաստատման մասին.

Զեկուցեց Ա.Պետրոսյանը

Նա ներկայացրեց Մյասնիկյան համայնքի գյուղապետարանի կողմից 2013թ-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները;

Քննարկվեց և համայնքի ղեկավարն ու ավագանու անդամները պատասխանեցին համայնքի բնակիչների հարցերին, տալով անհրաժեշտ բացատրություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի հաշվետվությունը համապատասխանում է կատարած աշխատանքին և գնահատվում է դրական:

2.Հաստատել Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2013թվականի կիսամյակային հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան